ՍԱՂՄՈՍ 117

ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ԹԱՐԳՄԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՍՏՐՈՖ ԲԱԺԱՆՈՒՄՆԵՐ

NASB	NKJV	NRSV	TEV	NJB
Փառաբանության Սաղմոս MT ներածություն չկա	Թող բոլոր ժողովուրդները փառաբանեն ՏԻՐՈՋԸ	Դոքսոլոգիա	ՏԻՐՈՋ փառաբանություն	Կոչ փառաբանելու
117:1-2	117:1-2բ 117:2գ	117:1-2	117:1-2բ 117:2գ	117:1-2բ 117:2գ

ԸՆԹԵՐՑԱՆՈՒԹՅԱՆ ԵՐՐՈՐԴ ՑԻԿԼ («Սուրբ Գիրքը ճիշտ կարդալու ուղեցույց»)
ԸՍՏ ՊԱՐԲԵՐՈՒԹՅԱՆ ԲՆԱԳՐԻ ՀԵՂԻՆԱԿԻ ՆՊԱՏԱԿԻ ՀԵՏՔԵՐՈՎ

Սա սերտողության ուղեցույց մեկնություն է, որը նշանակում է, որ դուք եք պատասխանատու Աստվածաշնչի ձեր մեկնության համար: Մեզնից յուրաքանչյուրը պետք է քայլի իր ունեցած լույսի ներքո: Մեկնաբանության մեջ հերթականությունը հետևյալ կերպ է՝ դուք, Աստվածաշունչը և Սուրբ Հոգին: Դուք չպետք է այն զիջեք որևէ մեկնաբանի:

Մեկ անգամ նստելով կարդացեք ամբողջ գլուխը: Գտեք թեմաները: Համեմատեք ձեր թեմաների բաժինները հինգ ժամանակակից թարգմանությունների հետ: Պարբերությունները ներշնչանքով չեն կատարված, սակայն դրանք կարևոր են բնագրի հեղինակի նպատակին հետևելու համար, որը հանդիսանում է մեկնաբանության սիրտը: Յուրաքանչյուր պարբերություն ունի միայն մեկ թեմա:

ՀԱՄԱՏԵՔՍՏԱՅԻՆ ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Ա. Սա Սաղմոսների գրքի ամենակարճ Սաղմոսն է:

Բ. Այն քաջալերում է հեթանոսներին փառաբանել Իսրայելի Աստծուն (տես՝ Սաղմոս 67, 100), միակ ճշմարիտ Աստծուն: ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ. ՄԻԱՍՏՎԱԾՈՒԹՅՈՒՆ

Գ. Իսրայելի Աստվածը կատարելապես հայտնված է՝
1. ստեղծագործության մեջ Իր գործերում (Ծննդոց 1-2, 6-9)
2. Աբրահամին տված Իր խոստումների մեջ (Ծննդոց 12, 15, 18, 22)
   ա. երկիրը
   բ. սերունդը
   գ. մեծ անունը
   դ. երկրի բոլոր ընտանիքները կօրհնվեն նրանում
   ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ. ՆԱՀԱՊԵՏՆԵՐԻՆ ՏՐՎԱԾ ՈՒԽՏԻ ԽՈՍՏՈՒՄՆԵՐԸ
3. Աբրահամի սերունդների հանդեպ փրկության գործերը (տես՝ Սաղմ. 117:2ա)
   ա. ելիցը
   բ. նվաճումը
   գ. գերությունից վերադարձնելը

ԲԱՌԵՐԻ ԵՎ ԱՐՏԱՀԱՅՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆ

NASB (ԹԱՐՄԵՑՎԱԾ) ՏԵՔՍՏ. ՍԱՂՄՈՍ 117:1-2
[1]Օրհնեցե՛ք ՏԻՐՈՋԸ, ո՛վ բոլոր ազգեր.
Փառաբանեցե՛ք Նրան, ո՛վ բոլոր ժողովուրդներ.
[2]Քանի որ Նրա գթառատ ողորմությունը մեզ վրա մեծ է,
Ու ՏԻՐՈՋ ճշմարտությունը հավիտյան է:
Փառաբանեցե՛ք ՏԻՐՈՋԸ:

117:1 Այս Սաղմոսը սկսում է և ավարտվում *Piel* ՀՐԱՄԱՅԱԿԱՆՈՎ՝ «Փառաբանեցե՛ք, օրհնեցե՛ք» (BDB 237, KB 248, տես՝ Սաղմոս 113, LXX, Սաղմոս 116): Սաղմոսներ 113-118 կոչվում են Hallel Սաղմոսներ՝ այս արմատի շնորհիվ:

❖ **«Փառաբանեցե՛ք/գովաբանեցե՛ք Նրան»** Սա երկրորդ *Piel* ՀՐԱՄԱՅԱԿԱՆՆ է (BDB 986, KB 1387, տես՝ Սաղմ. 147:12) և «փառաբանել» բառի հոմանիշն է, հ. 1ա:

❖ **«բոլոր ազգեր... բոլոր ժողովուրդներ»** Տիեզերական այս առանձնահատկությունը բնորոշ է Սաղմոսներին (տես՝ Սաղմ. 22:27, 33:8, 47:1, 66:1,4, 67:3-5,7, 82:8, 96:7-10, 98:4, 100:1):

Սա ՀԿ-ի մեծ հանձնարարությունն է: Իսրայելը պետք է լիներ «քահանաների թագավորություն» (տես՝ Ելից 19:5-6), քանի որ ամբողջ աշխարհն է ՅԱՀՎԵԻՆ պատկանում:

Այս համարը մեջբերված է Պողոսի կողմից Հռոմ. 15:11, որը շեշտադրում է ՅԱՀՎԵԻ կողմից հեթանոսների ներառումը Քրիստոսի կատարած գործի մեջ (տես՝ Հռոմ. 15:9-13, Հայտն. 7:9):

<u>ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ. ՅԱՀՎԵԻ ՀԱՎԻՏԵՆԱԿԱՆ ՓՐԿԱԳՈՐԾՈՒԹՅԱՆ ԾՐԱԳԻՐԸ</u>

117:2 «ողորմությունը... ճշմարտությունը» ՅԱՀՎԵԻ այս երկու առանձնահատկությունները (տես՝ <u>ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ. ԻՍՐԱՅԵԼԻ ԱՍՏԾՈ ԲՆԱՎՈՐՈՒԹՅԱՆ ԳԾԵՐԸ</u>) հաճախ են թվարկվում միասին (այսինքն՝ Սաղմ. 108:4, 115:1, 138:2):

«Ողորմության» համար տես՝ <u>ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ. ԲԱՐԵԳԹՈՒԹՅՈՒՆ (*HESED*)</u>

«Ճշմարտության» կամ «հավատարմության» համար տես՝ <u>ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ. ՀԱՎԱՏԱԼԸ, ՎՍՏԱՀԵԼԸ, ՀԱՎԱՏՔԸ ԵՎ ՀԱՎԱՏԱՐՄՈՒԹՅՈՒՆԸ ՀԿ-ՈՒՄ:</u>

❖ **«հավիտյան»** Տես՝ <u>ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ. ՀԱՎԻՏՅԱՆ (*'olam*)</u>

Սա կարևոր կետ է Իսրայելի կողմից պարբերաբար կրկնվող անհավատության և կռապաշտության պատճառով: ՅԱՀՎԵՆ հավիտյան հավատարիմ է, սակայն Նրա ժողովուրդը՝ ոչ: Նա ավելի մեծ նպատակ ունի, քան պարզապես մի ժողովուրդը՝ ազգը (տես՝ <u>ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ. ՅԱՀՎԵԻ ՀԱՎԻՏԵՆԱԿԱՆ ՓՐԿԱԳՈՐԾՈՒԹՅԱՆ ԾՐԱԳԻՐԸ</u>):

ՔՆՆԱՐԿՄԱՆ ՀԱՐՑԵՐ

Սա <u>ուղեցույց</u> հանդիսացող սերտողության մեկնաբանություն է, որը նշանակում է, որ դուք եք պատասխանատու Աստվածաշնչի ձեր մեկնաբանության համար: Մեզնից յուրաքանչյուրը պետք է քայլի իր ունեցած լույսով: Դուք, Աստվածաշունչը և Սուրբ Հոգին եք մեկնաբանության մեջ առաջին տեղում: Դուք չպետք է այն զիջեք մեկնաբանին:

Քննարկման այս հարցերը կազմվել են ձեզ օգնելու, որպեսզի մտածեք գրքի այս բաժնի գլխավոր հարցերի շուրջ: Դրանք մտածելու տեղիք տվող հարցեր են և վերջնական չեն:

1. Որքանո՞վ է տարածված ՀԿ-ում հեթանոսների հանդեպ ՅԱՀՎԵԻ ցուցաբերած սերը, հոգատարությունը, մտահոգությունը և փրկագործությունը:

2. Սահմանե՛ք *hesed*-ը (այսինքն՝ բարեգթությունը, ողորմությունը):
3. Սահմանե՛ք *emeth*-ը (այսինքն՝ ճշմարտությունը):
4. Ինչպե՞ս է ՅԱՀՎԵԻ սերը Իսրայելի հանդեպ ազդում հեթանոսների վրա: